ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 908-Ա « 06 » մարտի 2024 թ.

ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարան հասցեագրված Ալեքսանդր Աբրահամյանի 2024 թվականի հունվարի 25-ի թիվ Դ-11305-24 դիմումի հիման վրա, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթներին համապատասխան՝ իրականացվում է վարչարարություն:

Երևանի քաղաքապետի 2024 թվականի փետրվարի 22-ի N 665-Ա որոշմամբ Ալեքսանդր Աբրահամյանի 2024 թվականի հունվարի 25-ի թիվ Դ-11305-24 դիմումի հիման վրա իրականացվող վարչարարության ժամկետը երկարաձգվել է 10 (տասը) օրով:

Իրականացվող վարչարարության շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել հավելյալ ուսումնասիրել և բազմակողմանի գնահատման ենթարկել վարչարարության շրջանակներում «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2024 թվականի հունվարի 30-ի թիվ Դ/11305-24 և 2024 թվականի փետրվարի 16-ի թիվ Ն/8124-24 գրություններով ներկայացված տեղեկատվությունն ու ապացույցները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել, եթե գործի քննարկման համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր ձեռք բերել, որոնք, նույն օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, պարտավոր է ներկայացնել դիմողը և վարչական վարույթի մնացած ժամկետում հնարավոր չէ ըստ էության որոշում ընդունել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Ալեքսանդր Աբրահամյանի 2024 թվականի հունվարի 25-ի թիվ Դ-11305-24 դիմումի հիման վրա իրականացվող վարչարարության ժամկետը կրկին երկարաձգել 10 (տասը) օրով:

2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ